

**ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.
ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ**

Ա. Յ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Իրավունքի և քաղաքականության կապի հիմնախնդիրների հետազոտությունը ենթադրում է իրավունքի դերի ու նշանակության բացահայտում նաև քաղաքական գործընթացներում: Ավելին, դրանց հարաբերակցության հարցի ուսումնասիրությունն ինքնին դիտարկվում է որպես իրավաքաղաքական հետազոտությունների առանցքային հիմնախնդիր^{1}, ինչը օգնում է բացահայտելու սոցիալական գործընթացների վրա ներգործող ձևերի, կարգավորիչ դերի հետազոտման նոր ասպեկտներ:

Բնականաբար, իրավունքի և քաղաքականության հակադրումը անթույլատրելի է թեկուզև այն հիմնավորմամբ, որ այս երկու երևույթները գտնվում են փոխադարձ ու սերտ կապի մեջ: Միաժամանակ, դրանց միասնության և կապի բացահայտման մեթոդաբանությունը ենթադրում է, որ այդ հարաբերակցությունը պետք է խարսխվի, մի դեպքում, պոզիտիվ իրավունքի նկատմամբ քաղաքականության առաջնայնության վրա, իսկ մեկ այլ դեպքում՝ քաղաքականության նկատմամբ բնական իրավունքի գերակայության վրա:

Սակայն, այն դեպքում, երբ պետությունը՝ որպես քաղաքական համակարգի կենտրոնական օղակ, դադարում է արտահայտել հասարակության շահերն ամբողջությամբ և վերածվում է քաղաքական ընտրանու «կուսակցականացված» կազմակերպության՝ արտահայտելով միայն վերջինիս կորպորատիվ շահերը, առաջանում է կոնֆլիկտ իրավունքի և քաղաքականության միջև:

Այդ կոնֆլիկտի լուծման հիմնական ճանապարհը քաղաքական իշխանության «վերադարձն» է պետության պոզիտիվ պարտավորությունների կատարման «համընդհանուր օրրան»: Իհարկե, այդպիսի «վերադարձը» պետք է իրականացվի քաղաքական համակարգի մյուս մասնակիցների համաձայնության և նրանց շահերի քաղաքակիրթ պահպանման առկայությամբ:

Քաղաքականությունը՝ արտահայտելով հասարակական շահերը, սահմանում է իրավունքի բովանդակությունն ու իրացման շրջանակները, ինչը վկայում է նույն իրավունքի քաղաքականացման մասին: Իսկ, եթե իրավունքն է կոչված ապահովելու քաղաքական գործունեության իրականացման իրավական ձևերը, ապա իրավաքաղաքական այդպիսի կարգավորումը բերում է պետության և քաղաքացիական հասարակության քաղաքական փոխգործակցման ձևերի զարգացմանը և քաղաքական մշակույթի ու ակտիվության բարձրացմանը:

Իրավունքի և քաղաքականության կապի դիալեկտիկան պահանջում է, որպեսզի, մի կողմից, իրավաքաղաքական գործընթացներում քաղաքական նպատակահարմարությունը ածանցվի իրավունքից կամ բխի օրինականության բովանդակությունից, իսկ մյուս կողմից՝ միայն այդպիսի նպատակահարմարությամբ չարդարացվի իրավունքի ցանկացած պահանջի խախտում:

իրավունքի նկատմամբ քաղաքականության ներգործուն գերակայության առկայությունը վկայում է իրավունքի ուղղակի քաղաքականացման մասին: Այն բխում է պետության ու իրավունքի պատմական օրինաչափ կապից և իրավունքի իրացման մեխանիզմի ու բովանդակության փոխկապվածությունից:

Ժամանակակից քաղաքական համակարգի չափանիշներին համապատասխան գործելու ձգտում ունեցող յուրաքանչյուր պետության առջև անխուսափելիորեն ծագում են համապետական նշանակության այնպիսի խնդիրներ, որոնց լուծման համար պահանջվում են յուրահատուկ մոտեցումներ՝ հաշվի առնելով նաև տվյալ երկրի ազգային արժեհամակարգային առանձնահատկությունները: Ընդ որում, հիշյալ հարցադրման շրջանակում մասնագիտական բանավեճերն էլ ավելի սուր բնույթ են ստանում, երբ խոսքը գնում է, այսպես կոչված, «իշխանության կուսակցականացման» կամ իրավունքի ուղղակի քաղաքականացման հետևանքի մասին:

Իրավագիտության մեջ բազմիցս հաստատվել է այն թեզը, որ պետության՝ որպես քաղաքական համակարգի ինստիտուտի և քաղաքացիական հասարակության՝ որպես ապաքաղաքական ոլորտի հարաբերություններում քաղաքական կուսակցություններն՝ այդ կողմերի միջև կապի ու միասնության ապահովման տեսանկյունից, ունեն կարևոր դերակատարում: Եվ դա այն դեպքում, երբ ժամանակակից սահմանադրությունների մակարդակում նույնիսկ չի տրվում քաղաքական կուսակցությունների նորմատիվային սահմանումը, այլ միայն դրանցում ամրագրվում են կուսակցությունների նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև հասարակության ակտիվ ու կազմակերպված մասի քաղաքական կամքի արտահայտմանը նպաստելուն կամ աջակցելուն ուղղված դրույթներ:

Վերջին տարիներին ժողովրդավարական հասարակություն կառուցող երկրներում՝ «կոալիցիոն կառավարություններ» կամ «սահմանադրական բացարձակ մեծամասնություն» մոդելների համատեքստում, կուսակցությունները հանդիսանում են նաև իշխանության իրականացման կառուցակարգի անբաժան մաս, ինչը գործնականում, երբեմն նաև թյուր, բայց իրականում այն եզրահանգման է հանգեցրել, որ պետական իշխանական լիազորությունների վերաբաշխմանն ու անմիջական իրականացմանն ակտիվ մասնակցությունն են ունենում հենց կուսակցությունները:

Ընդ որում, արտահայտելով քաղաքացիական հասարակության շահերն ու պահանջները քաղաքական կյանքում, քաղաքական կուսակցությունները՝ իբրև հասարակության կազմակերպված մաս, իրացնում են պետական իշխանության ձևավորման և, այնուհետև, իշխանության իրականացմանն անմիջական մասնակցություն ապահոված քաղաքացիական հասարակության իրավունքը: Այսինքն՝ քաղաքական կուսակցությունն իր անդամների նկատմամբ ունենալով ներկուսակցական վերադասություն, այնուհետև՝ ընտրությունների արդյունքներով պայմանավորված, օժտվում է պետաիրավական իշխանությամբ ու վերածվում քաղաքական իշխանություն կրող սուբյեկտի:

Այնուամենայնիվ, եթե քաղաքական կուսակցությունն իր գործունեության սկզբնական փուլում հանդիսանում է քաղաքացու՝ քաղաքական գործընթացներին մասնակցության, միայն կազմակերպական ինստիտուցիոնալ կառուցակարգի տարր, ապա, կախված ընտրությունների դրական ելքից, այն վերածվում

է իշխանության անմիջական իրականացման մասնակցի կամ դառնում այդ կառուցակարգի անբաժան մաս:

Ավելին, քաղաքական կուսակցությունները քաղաքական իշխանություն ձեռք բերելուց հետո դադարում են հասարակության մաս կազմելուց և դառնում համազգային կազմակերպություն, և արդյունքում պետությունը վերածվում է «կուսակցական պետության»: Տվյալ դեպքում խոսքը գնում է սահմանադրական ինստիտուտների ու պետական մարմինների նկատմամբ քաղաքական կուսակցությունների դերի գերազնահատման մասին, ինչը, կարծում ենք, արդեն ժողովրդավարության սկզբունքի խախտում է և վտանգում է քաղաքական համակարգն ամբողջությամբ:

Ակնհայտ է, որ «իրավունքի քաղաքականացումը»՝ որպես իրավունքի նկատմամբ քաղաքականության ներգործության դրսևորման ձև, թերևս կարող է վտանգել ժողովրդավարական երկրների քաղաքական իշխանության ձևավորման ու կայացման գործընթացները: Իսկ դրա բացասական հետևանքներն ավելի ակնառու են հատկապես հետխորհրդային պետություններում:

Իրավունքի քաղաքականացման ինչպիսի՞ հնարավոր հետևանքների մասին կարող է խոսք գնալ:

Առաջին, քաղաքական ընտրանին «կրելով» իշխանությունը, և՛ ոչ թե իշխանության իրավունքը, պաշտպանում է հասարակության ընդամենը կուսակցական նեղ խմբային շահերը, ինչի արդյունքում պետության քաղաքականության մեջ հանրային շահերի գերակայության ապահովումը խեղաթյուրվում է և կրում ձևական բնույթ:

Երկրորդ, պետության հետ քաղաքական կուսակցությունների սերտաճման արդյունքում, խորհրդարանական մարմինները վերածվում են քաղաքական անարդյունավետ ներկայացուցչությունների, իսկ օրենսդիր մարմնի քաղաքական առաջատար դերակատարությունն ուղղակի փոխարինվում է գործադիր իշխանության դերի ուժեղացմամբ: Նման քաղաքական փոխակերպման գործընթացները ուղիղ հակառակ ազդեցություն են ունենում պետության և քաղաքացիական հասարակության միջև ձևավորվող քաղաքակիրթ ու ժողովրդավարական հարաբերությունների վրա՝ հանգեցնելով կուսակցությունների դերակատարման ուղղակի ձևախեղմանն ու քաղաքական համակարգի կողմերի միջև կապի ու միասնության խաթարմանը:

Երրորդ, այն դեպքում, երբ կուսակցությունները քաղաքական իշխանություն ձեռք բերելուց հետո «դադարում են» քաղաքացիական հասարակության կազմակերպություն համարվելուց, «քաղաքական հուշագրերի ու պայմանավորվածությունների» հովանու ներքո սկսում են իրենց վերապահել պետական իշխանության մարմնի գործառնություններ: Իհարկե, այդ առումով անմասն չի մնում նաև պետությունը՝ ուղղակի ցուցաբերելով առաջնային մասնակցություն ոչ թե քաղաքական արդյունավետ համակարգի ապահովմանը, այլ առավելապես «կուսակցական» համակարգի շինարարությանը:

Չորրորդ, ձևախեղվում են իշխանության և իրավունքի փոխգործակցության կառուցակարգերի գենետիկական հիմքերը, արդյունքում, այդպիսի հակադրության պայմաններում պետությունը՝ որպես ողջ հասարակության քաղաքական կազմակերպություն, աստիճանաբար փոխարինվում է տնտեսական իշխող քա-

ղաքական կազմակերպության: Իսկ դա իր հերթին բերում է ժողովրդավարական համակարգի նկատմամբ հասարակության վստահության անկմանը, այնուհետև՝ քաղաքական համակարգում ժողովրդավարության անտեսմանը՝ ընդհանրապես:

Սակայն անհրաժեշտ է կարևորել նաև այն, որ իրավունքի և քաղաքականության փոխկապվածությունը պահպանվում է այնքան ժամանակ, քանի դեռ փոփոխությունների չի ենթարկվել իրավական քաղաքականությունը: Ընդ որում, քաղաքական հարաբերություններում պահանջարկված է դառնում կամ հասունանում իրավական առանձին պոստուլատների փոփոխության անհրաժեշտությունը, այդ թվում՝ նույնիսկ քաղաքականության ներգործության պարագայում: Այսինքն, նման դեպքերում, քաղաքականությունը վերածվում է պայմանի՝ նոր իրավական նորմեր ստեղծելու համար: Իսկ այն դեպքերում, երբ արդյունավետությունն ապահովող քաղաքականությունը պահանջարկված է դառնում պետական ծրագրերի իրականացման համար, ապա քաղաքական այդպիսի որոշումներին անհրաժեշտ է տալ համապատասխան կատարման բնույթ՝ միայն իրավական ակտերում դրանք ամրագրելու միջոցով: Նման դեպքերում արդեն խոսքը գնալու է քաղաքականության նկատմամբ իրավունքի գերակա իրողությունների մասին:

Իրավունքի և քաղաքականության փոխադարձ կապն ունի իր հնարավոր դրսևորումները.

1) Իրավունքը քաղաքականությանը հաղորդում է իրավական ձև, իսկ քաղաքականությունը գործումն ազդեցություն է ունենում իրավական նորմերի բովանդակության վրա: Ընդ որում, եթե այդ ներգործությունը էական է, իշխանական հարաբերություններում սահմանադրաիրավական կանոնակարգումը փոխարինվում է քաղաքական կարգավորմամբ, իսկ ժողովրդավարությունը փոխակերպվում (տրանֆորմացվում) է այլընտրանք չունեցող «գերգաղափարախոսության», ապա քաղաքական ընտրանին՝ որպես մեծամասնության նկատմամբ պետական իշխանություն իրականացնող փոքրամասնություն, իշխում է նույն մեծամասնությանը, սակայն, առաջին հերթին կուսակցական խմբային շահերի բավարարման պայմանով:

2) Եթե պետության քաղաքականությունը՝ որպես սահմանադրական իրավունքի կարգավորման օբյեկտ, կոչված է որոշելու իշխանության դերը, խնդիրներն ու իրացման սահմանները պետության և հասարակական կյանքում, ապա այն պահանջում է իրավունքի առաջնայնության ապահովում: Ընդ որում, իրավունքի և քաղաքականության հարաբերակցության հենքի վրա են ձևավորվում քաղաքական այնպիսի հարաբերություններ, որոնք դրսևորվում են մարդու իրավունքների ու ազատությունների ապահովմանն ուղղված պետական մարմինների ու հասարակական ինստիտուտների երաշխիքների միջոցով:

3) Իրավունքի, հատկապես սահմանադրական իրավունքի նորմերով ֆորմալիզացված պետական քաղաքականությունն ինքնին ինստիտուցիոնալ բնույթ ունի: Սակայն, երբ քաղաքականությունն է սահմանադրականացվում, ապա քաղաքական գաղափարները կրում են արստրակտ բնույթ և, միաժամանակ, քաղաքական բովանդակություն հաղորդում իշխանությանը: Այդ դեպքում՝ «իրավունքի քաղաքականացման» բովանդակությունը չի համընկնում «իշխանու-

թյան կուսակցականացման» նպատակների հետ, և իրավունքի գերակայության ապահովումը վերածվում է իրավական քաղաքականության իրական ներուժի:

4) Քաղաքական ընտրանու կողմից պետական քաղաքականության անհարկի «քաղաքականացումը» կարող է իշխանությանը զցել անարդարության մեջ՝ կամ սխալմամբ, կամ «կուսակցականացված» օրենքների ընդունմամբ: Ի վերջո, խնդրահարույց է դառնում հենց արդար հասարակության ստեղծմանն ուղղված հասարակական շահերի համաձայնության ապահովումը: Իհարկե, մնան քաղաքականության պարագայում՝ անգամ, ձևական իրավական մեխանիզմները չեն կարող որոշիչ դեր խաղալ իրավական և ժողովրդավարական պետության իրավաքաղաքական կարգի ապահովման ու պահպանման համար:

Իրավունքի և քաղաքականության հարաբերակցության կոնցեպտի վերաբերյալ մնան ըմբռնումներ բերում է այն եզրահանգման, որ միջազգային հասարակական քաղաքական զարգացումները և իրավական գլոբալացումը առաջադրում են որակապես նոր հարցադրումներ, որոնց նկատմամբ ժամանակային առումով չարձագանքելը կարող է հանգեցնել ժամանակակից հասարակությունում իրավունքի և իրավական իրողության էական հատկանիշների դիալեկտիկական փոխկապվածության ուղղակի խաթարմանը:

Խնդիրն այն է, որ, քաղաքականության սահմանադրականացման բացակայության պայմաններում հենց իրավունքն է քաղաքականացվում նույն «կուսակցականացված» իշխանության միջոցով: Այստեղ քաղաքականության և իրավունքի հարաբերակցության խնդիրը պետք է քննարկել ոչ թե իրավունքի և քաղաքականության, ինչպես նաև իշխանության և կուսակցությունների միջև մեխանիկական հակադրման հարթությունում, այլ սահմանադրաիրավական այն իրողության մեջ, որտեղ «կոնֆլիկտը» և «կոմպրոմիսը» ընկալվում են որպես ժամանակակից հասարակության մշտական գոյության նախապայման: Ի վերջո, արդարացի է գերմանացի տեսաբան Ռուդոլֆ Ֆոն Իերինգը, որ «իրավունքը դա ուժի քաղաքականություն չի, այն հանդիսանում է պետական ուժի սահման, իսկ պետությունը համարվում է որպես ուժ՝ տրված ծառայելու իրավունքին»**{2}**:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ իրավունքի և մարդու իրավունքների գերակայությունը քաղաքականության նկատմամբ գոյություն ունի այնտեղ, որտեղ տոտալիտար ռեժիմը բացակայում է: «Տոտալիտարիզմը առաջանում է այնտեղ, որտեղ քաղաքականությունը, քաղաքական նորմերը չունեն իրավական հիմքեր, որտեղ մարդու իրավունքները չեն համարվում քաղաքական իշխանությունը սահմանափակող և դրա իրականացման վերահսկողության միջոց» **{3}**:

Չետինդուստրիալ ժամանակաշրջանում իրավունքի «քաղաքականացումը» ընդմիջտ ուղեկցվելու է իշխանության «կուսակցականացմամբ»: Դա ընդամենը քաղաքական պայքարի հետևանք է և միաժամանակ, պայմանավորված է այն հանգամանքով, որ հասարակությունում գործում են ֆորմալ և ոչ ֆորմալ այնպիսի կանոններ և սկզբունքներ, որոնց օգնությամբ է իրականացվում հասարակական հարաբերությունների քաղաքական կարգավորումը:

Սակայն XXI դարում ժամանակակից հասարակության առջև առաջադրված զանգվածային ու գլոբալ հիմնախնդիրների դիմակայումն ավելի առաջնային է դառնում, քան իշխանության համար քաղաքական պայքարը: Իսկ այդ հիմ-

նախնդիրների լուծմանն անհրաժեշտ է, որպեսզի քաղաքական համակարգը շուտ գա դեպի իրավունքը, դեպի մարդու իրավունքները՝ այդ համակարգի մասնակիցների միջև պարզ, քաղաքակիրթ համաձայնության ճանապարհով, հակառակ դեպքում, իրավունքի հետագա «քաղաքականացման» պայմաններում, իշխանությունը կհայտնվի աշխարհաքաղաքական «կոլլապսում»:

Այդ առումով, քաղաքականության այն հիմունքները, որոնք ընկալվում են որպես պետության գործի կառավարման հիմքում ընկած ղեկավար սկզբունքների ամբողջություն, պետք է սահմանադրականացվեն և իրենց ամրագրումը ստանան Սահմանադրության տեքստում: Այս դեպքում, Սահմանադրության և հասարակական-քաղաքական կարգի կայունության, ինչպես նաև սահմանադրականության և սահմանադրաքաղաքական իրավակարգի միջև արդյունավետ կապ կարող է ստեղծվել միայն հանրային, այդ թվում իրավական քաղաքականության գերակայության և հիմունքների սահմանադրականացման ճանապարհով: Այդ իմաստով կարևոր է ոչ միայն իշխանության ապակուսակցականացումն ապահովող սահմանադրական իրական հիմքերի սահմանումը, այլև դրանց գործունե կիրառման ապահովումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Лукашева Е. А.* Права человека. - М.: 2004. С. 236-237.
2. Учение Р. Иеринга о праве и государстве /История политических и правовых учений./Под общ. ред. *В. С. Нерсисянца*. - М.: 1998. С.524-525.
3. *Арутюнян А. А.* Капитуляция политической системы перед правами человека. / Сборник научных статей. - Е.: ун-т "Манц", 2010. С. 18-19.

ПРАВО И ПОЛИТИКА: ПРОБЛЕМЫ СООТНОШЕНИЯ И МЕЖДУНАРОДНЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ

А. Г. Хачатрян

В представленной работе рассмотрены роли и значения права в тесной связи с политическими процессами. Исследована проблема соотношения права, прав человека и политики в характере политического режима, изучено его влияние на социальные процессы, выявлены международные тенденции системного развития правовой политики.

LAW AND POLITICS: THE PROBLEM OF CORRELATION AND INTERNATIONAL TRENDS

А. Н. Khachatryan

In the present study examined the role and importance of law in close connection with political activities. The problem of the relations, human rights and politics in the nature of the political regime, its influence on social processes. identified international trends of development of the system of legal policy.